Ազգ
Azg
armenian daily
16 ՄԱՅԻՍ 2003 ՈՒՐԲԱԹ 93 (2778)

## Վաշինգտոնը մեղմացնում է դիրքը հակաիրաքյան պատժամիջոցների վերացման հարցում

Երեկ վերադառնալով Մոսկվայից, Մ. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելը ժամանեց Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիա, որտեղ հայտարարեց, որ իր երկիրը մեղմացնում է դիրքը Իրաքի դեմ պատժամիջոցները վերացնելու պահանջի հարցում եւ առայժմ կբավարարվի, եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը համաձայնի առկախել պատժամիջոցները՝ հետագայում դրանք լիովին վերացնելու հեռանկարով:

Դիրքորոշման այս փոփոխությունը վերլուծաբանները մեկնաբանում են Ռուսաստանի կեցվածքով: Ինչպես հայտնի է, Մոսկվան դեմ է պատժամիջոցների վերացմանը, պնդելով, որ դրանք ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից ընդունվել են զանգվածային ոչնչացման զենքերի արգելման նպատակով: Հետեւաբար, մինչեւ որ ՄԱԿ-ի տեսուչները չզեկուցեն Իրաքում նման զենքերի բացակայության մասին, չի կարելի պատժամիջոցները վերացնել, այլապես ՄԱԿ-ը հակասած կլինի իր իսկ նախապես ընդունած որոշմանը:

Նախորդ գիշերը հայտնի էր դարձել, որ Ռուսաստանի նախագահը Քոլին Փաուելին հենց այդ դիրքորոշումն էր պնդել:

## Ջ. Ռոբերտսոն. «ՆԱՏՕ-ն ունի հարավկովկասյան ներուժի օգտագործման նոր ծրագրեր»

ԵՐԵՎԱՆ, 15 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնն այսօր Հայաստանի ֆրանսիական համալսարանի ուսանողության եւ դասախոսական կազմի հետ հանդիպման ժամանակ նշեց, որ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտնել է ՆԱՏՕ-ի հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում առավել ակտիվ համագործակցելու պատրաստակամության մասին: Ըստ նրա, դաշինքն իր հերթին ունի հարավկովկասյան տարածաշրջանի ներուժը օգտագործելուն ուղղված նոր ծրագրեր, «ինչը կհիմնվի ոչ թե գաղափարի, այլ արդյունքի վրա»:

«ՆԱՏՕ-ն կստանձնի որոշակի դեր այս տարածաշրջանի խնդիրների լուծման հարցում, բայց անվտանգության եւ կայունության ապահովման հիմնական պատասխանատվությունը տարածաշրջանի երկրներինն է: Մենք կաջակցենք հնարավորին չափով: Կարծում եմ դրան մեծապես կնպաստի նաեւ Ռուսաստանի հետ մեր խորացող գործակցությունը», - ընդգծեց գլխավոր քարտուղարը: Նա պատմական որակեց Մոսկվայի համաժողովը, որի ընթացքում «ՆԱՏՕ-ի անդամներն ու Ռուսաստանը, մի կողմ թողած երբեմնի տարաձայնությունները, կլոր սեղանի շուրջ բանակցել են համընդհանուր սպառնալիքների դեմ պայքարի վերաբերյալ»:



Լորդ Ջ. Ռոբերտսոնի խոսքերով, վերջին 15 տարիներին ՆԱՏՕ-ն վերացնում է եվրատլանտյան տարածաշրջանը բաժանող սահմանները՝ տարածելով խաղաղության եւ ժողովրդավարության արժեքները: Ըստ նրա, Դաշինքը ռազմավարական գործակցություն է ծավալում Ռուսաստանի եւ Եվրամիության հետ: «Անցած տարի Պրահայի գագաթաժողովում մենք միասնաբար քննարկեցինք 21-րդ դարի հիմնական սպառնալիքները՝ նախապատրաստվելով նոր հազարամյակի փորձություններին: Մեր որոշումները հնարավորություն են տալիս պայքարելու ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքերի եւ անկայունության հետեւանքների դեմ ու կառուցելու արդյունավետ համակարգ՝ գիտակցելով այդ հարցում Հյուսիսատլանտյան դաշինքի ներուժը», -նշեց նա:

Ակտիվ հասարակական, քաղաքական գործունեության եւ աշխարհի խաղաղության ապահովման գործում մեծ ներդրումի համար Հայաստանի ֆրանսիական համալսարանի ռեկտոր Արթուր Բաղդասարյանը Ջ.Ռոբերտսոնին շնորհեց բուհի պատվավոր դոկտորի կոչում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

## Բանկերի ղեկավարներն ավելի համախմբված կգործեն

### *Հայաստանի բանկերի միության նոր խորհուրդ եւ նախագահ*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի բանկերի միության 6-րդ համագումարը թերեւս բեկումնային նշանակություն կունենա ինչպես միության, այնպես էլ բանկային համակարգի համար ընդհանրապես: Երեկ «Կոնգրես» հյուրանոցում Հայաստանի 16 բանկերի ղեկավարներ փոփոխություններ կատարեցին միության կանոնադրության մեջ, ինչը հնարավորություն կտա առավել գործուն եւ ազդեցիկ դարձնել այդ կառույցը: Համաձայն այդ փոփոխությունների, ընտրվեց 6 հոգուց կազմված խորհուրդ, որի մեջ ընդգրկվեցին «Անելիք», «Կոնվերս», «Հայխնայբանկ», ACBA, «Հայներարտբանկ», «HSBC բանկ-Հայաստան» բանկերի ղեկավարները: Այնուհետեւ ընտրվեց բանկերի միության նախագահ՝ «Անելիք» բանկի նախագահ Սամվել Ճզմաչյանը:




Համագումարին ողջույնի խոսք ուղղեցին ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը, ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը, Արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը, ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը:

Տես ➧ էջ 2

## Հեյդար Ալիեւը աշխատանքի կանգնի 3-4 շաբաթ անց

ԲԱՔՈՒ, 15 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը «իրեն լավ է զգում»: Այդ մասին այսօր լրագրողների հետ զրուցելիս հայտնել է պետության ղեկավարի որդին՝ Իլհամ Ալիեւը: «Բժիշկներն ասել են, որ վերականգնման եւ հանգստանալու համար Ադրբեջանի նախագահին անհրաժեշտ կլինի 6-7 շաբաթ. դրանցից երեքն արդեն անցել է», ասել է Իլհամ Ալիեւը, նշելով, որ «այդ ժամկետն ավարտվելուց հետո պետության ղեկավարը կանգնի աշխատանքի»: Մայիսի 3-11-ը Ադրբեջանի նախագահը բուժզննում էր անցնում Անկարայի «Գյուլհանե» ռազմաբժշկական ակադեմիայում:

## Լիբանանի ոստիկանությունը ձերբակալեց ահաբեկչական խումբ

Լիբանանցիներից ու պաղեստինցիներից բաղկացած ահաբեկչական խումբ է երեկ ձերբակալվել Լիբանանում: Տեղի ոստիկանության հաղորդման համաձայն, խումբը պատրաստվում էր օրերս ահաբեկչական գործողություններ իրականացնել արեւմտյան դեսպանատներից մեկի դեմ: Ամերիկացիների ասելով, այդ գործողություններն ուղղված էին լինելու իրենց դեսպանատան դեմ: Արդեն, ասում են ամերիկյան աղբյուրները, երկու օր առաջ մահափորձի ծախողված փորձ է եղել Բեյրութում Մ. Նահանգների դեսպանի դեմ: Լիբանանյան ոստիկանության համաձայն, ահաբեկչական խմբի բացահայտման գործում իրենց օգնել են սիրիական գաղտնի ծառայությունները: Քաղաքական դիտորդների կարծիքով, ահաբեկչական ցանցի բացահայտումն ու ձերբակալումն ապացույց է այն բանի, որ Սիրիան լրջորեն հաշվի է առել պետքարտուղար Քոլին Փաուելի՝ օրերս Դամասկոսում ու Բեյրութում ներկայացրած պահանջներն ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտության մասին:

## Մ. Նահանգները շարունակելու է բարեկամությունը Թուրքիայի հետ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 15 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Կոնդոլիզա Ռայսը հայտարարել է, որ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի կապերում ծագած դժվարությունները հետեւում են մնացել, եւ որ միասնական ռազմավարական շահեր ունեցող երկու երկրների միջեւ բոլոր բնագավառներում համատեղ աշխատանքները շարունակվելու են: Ըստ «Անատոլու» գործակալության, օտարերկրյա լրագրողների համար Վաշինգտոնում կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ նշելով, որ միասնական եւ կայուն Իրաքի հիմնումից կշահեն եւ՛ Թուրքիան, եւ՛ ԱՄՆ-ը, Ռայսն ասել է, թե իրենք ցանկանում են, որ Թուրքիան նույնպես մասնակցի Իրաքի վերականգնման համար գործադրվող ջանքերին, քանզի շարունակում է մնալ ՆԱՏՕ-ի կարեւոր դաշնակիցը: Նշելով, որ ԱՄՆ-ը եւ Թուրքիան համատեղ նպատակներ ունեն, Ռայսն ասել է. «Այո, դժվար ժամանակն արդեն անցել է, մեր կապերը շարունակելու են ամուր մնալ»:

## Հոբելյանական

■ Այսօր Նկարչի տան ցուցասրահում, ժամը 15:00-ին կբացվի մեր մեծատաղանդ նկարիչ Հակոբ Հակոբյանի հոբելյանական՝ 80-ամյակի ցուցահանդեսը: Հայտնի նկարիչը ծնվել է 1923 թ. մայիսի 24-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

■ Այսօր լրանում է մեր գործընկեր, «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Տիգրան Ֆարմանյանի 50-ամյակը: Այդ առթիվ 4-րդ էջում հրատարակում ենք հոբելյարի հետ հարցազրույց եւ լավագույն բարեմաղթանքներ հղում:

## ՀՌԱԿ ղեկավարների այցը Լոռի

Շարունակելով նախընտրական հանդիպումները հանրապետության մարզերում, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը եւ Հանրապետական վարչության անդամներ Արմեն Ազիզյանն ու Կարեն Կակոյանը երեկ եղան Լոռիում: Հանդիպումներ տեղի ունեցան մարզի Վանաձոր, Ստեփանավան եւ Տաշիր քաղաքներում: ՀՌԱԿ ատենապետը լոռեցիներին ներկայացրեց այն ծրագրերն ու խնդիրները, որոնք իր առջեւ է դրել ավանդական կուսակցությունը: Ռուբեն Միրզախանյանը խոսեց նաեւ ՀՌԱԿ եւ Ռուսաստանի հայերի միության համագործակցության, այն զարգացման ծրագրերի մասին, որոնց արդյունքում կբացվեն ձեռնարկություններ, կստեղծվեն աշխատատեղեր: Կուսակցականները նաեւ մարզի 5 դպրոցներում համակարգչային դասարաններ բացեցին: Այցելության մասին առավել մանրամասն «Ազգի» վաղվա համարում:

## Գորիսում նախատեսվում է ստեղծել Կարիերայի կենտրոն

ՀՌԱԿ համամասնական ցուցակում ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղի ռեկտոր Յուրա Սաֆարյանը զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը: Նրա համոզմամբ, կրթական բարեփոխումները պետք է սկսել նախակրթարաններից՝ երեխաներին նախապատրաստելով տիրապետելու կրթական այնպիսի մակարդակի, որ կարողանան հեշտությամբ ինտեգրվել արեւմտյան եւ առաջավոր ասիական կրթական համակարգերին: Անկախ այս ընդհանրական սկզբունքից, մարզային կրթական ապարեզները եւս իրենց առանձնահատուկ խնդիրներն ունեն: Մասնավորապես Գորիսի երիտասարդությունը բուհին ու ուսումնարանն ավարտելուց հետո մեծապես կանգնում է աշխատատեղ գտնելու խնդրի առաջ: Ի դեպ, սա ընդհանուր ցավ է հատկապես տնտեսագիտական, իրավաբանական



ֆակուլտետների շրջանավարտների համար նաեւ ողջ հանրապետությունում:

Գորիսում նախատեսվում է ստեղծել Կարիերայի կենտրոն, ուր երիտասարդները կներկայացնեն իրենց, գործատուներն՝ իրենց շահերը: Նախադեպն արդեն կա Երեւանի ճարտարագիտական համալսարանում, որի խնդիրը շրջանավարտների հետուսուցման գործունեության կազմակերպումն է: Գորիսում մտածում են ստեղծել նաեւ երիտասարդությանն աջակցող կենտրոններ անվճարունակ ուսանողների եւ վճարովի ֆակուլտետներում սովորողների համար, որպեսզի նրանք անարգել շարունակեն ուսումը: Այդպիսի կենտրոնների ստեղծումը, Յուրա Սաֆարյանի համոզմամբ, լուրջ գործոն կարող է դառնալ հատկապես սահմանամերձ շրջաններից երիտասարդության արտահոսքը կանխելու գործում:

Կ. Գ.

